# ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Հարթագյուղ համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ

| Համայնքը | Միջոցառման անվանումը | Օրը | Ժամը | Անցկացման վայրը |
|---|---|---|---|---|
| **Հարթագյուղ** | Ավագանու հերթական նիստ | 01.04.2021թ. | 12:00 | **Հարթագյուղի** համայնքապետարան (գ.Հարթագյուղ 6 փողոց, 3 շենք) |

Նախագիծ

ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021թ.
ԱՊՐԻԼԻ 01-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ Օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով`

Հարթագյուղ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Հարթագյուղ համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 01-ի հերթական նիստի օրակարգը

## Օրակարգ

1. Հայաստանի Հանրապետության Լոռու Հարթագյուղ համայնքի ավագանու 2021թ. Ապրիլի 01-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

Զեկ. Ա.Հարությունյան

2. ՀՀ Լոռու մարզի Հարթագյուղ համայնքի բյուջեի 1-ին եռամսյակի կատարման մասին

Զեկ. Ա.Հարությունյան

3 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Հարթագյուղ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին

Զեկ. Ա.Հարությունյան

Նախագիծ

# ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ՁԵԿ. Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Բյուջետային համակարգի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասին

***Հարթագյուղ համայնքի ավագանին որոշում է.***

Հարթագյուղ համայնքի 2021թ. Բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին հաղորդմանը հավանություն տալ:

Նախագիծ

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՁԵԿ. Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, և համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Հարթագյուղ համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 5-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Հարթագյուղ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Հավելված

1. Մկրտչյան Զեմմա Գուրգենի 25.000 հազար դրամ /անապահով ընտանիք /

2. Թադևոսյան Անի Սամվելի 20.000 հազար դրամ /երեխայի ծննդյան միանվագ օգնություն /

3. Մանուկյան Գագիկ Աղվանի 20.000 հազար դրամ /երեխայի ծննդյան միանվագ օգնություն /

4. Հակոբյան Էդգար Մնացականի 20.000 հազար դրամ /երեխայի ծննդյան միանվագ օգնություն /